ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի 2021 թվականի N54-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն ու N912-Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն 2021 թվականի ապրիլի 16-ին <<Մաչանյան Կարեն>> /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ԱՁ-ի կողմից ստացված հողամասի, շինության հատակագծերի և շինության բնութագրի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղի թիվ 53/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության 0,005 հեկտար խառը կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 9,6 քառակուսի մետր /արտաքին մակերեսով/ շենք-շինությունը ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականությունը:

2. Բանավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Ձոնիկ Պավլուշի Հոբոսյանին՝ օրինականացված 9,6 քառակուսի մետր /արտաքին/ մակերեսով շենք-շինությունը և 0,005 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով գնելու համար:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 13

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2021 թվականի N55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 5-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքում սահմանել երկու տեղամասային կենտրոններ՝

1) առաջին ընտրական տեղամասային կենտրոն սահմանել <<Մերձավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ շենքը՝ հասցեն Մասիսի փողոց N4.

2) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել <<Մերձավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ տնօրեն Զարուհի Ստեփանյանին /հեռ. 093-09-67-78/.

3) երկրորդ ընտրական տեղամասային կենտրոն սահմանել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ շենքը՝ հասցեն Երիտասարդության փողոց N39.

4) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ տնօրեն Ալվարդ Խուրշուդյանին /հեռ. 095-09-05-65/.

2. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքները տիրապետողներին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 17
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2021 թվականի N56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար քարոզչական պաստառները փակցնելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Երևանյան խճուղու N15, N57, N63 և N65 բազմաբնակարան շենքերի պատերին՝ տրամադրված 3-4 քառակուսի մետր մակերեսների վրա:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 17

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2021 թվականի N57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 17.06.2016թ. թիվ 22-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար նախընտրական ժողովների և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրել դահլիճ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքում այլ դահլիճ չլինելու պատճառով տրամադրվում է <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ դահլիճը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 17

համայնք Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 17-ի
N 57-Ա որոշման

2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման համար համայնքում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճի վերաբերյալ

Հ/հ	Դահլիճի, շինության անվանումը	Գտնվելու վայրը /հասցեն/	Նստա-տեղերի թիվը	Տրամադրելու օրերը և ժամերը	Դահլիճը տնօրինող	Այլ նշումներ
1.	<<Մերձավանի մշակույթի տուն >> ՀՈԱԿ	Երիտասարդության փողոց թիվ 39	300	Յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 15:00-ից մինչև 19:00, իսկ ոչ աշխատանքային օրերին՝ ժամը 11:00-ից մինչև 19:00:	Ալվարդ Խուրշուդյան	2021 թվականի հունիսի 18-ին դահլիճը տրամադրել մինչև ժամը 19:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2021 թվականի N58-Ա

ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի N55-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Արման Վիտուշի Աբրահամյանին** տրամադրել 50 000 ՀՀ դրամ դրամական օգնություն երեխայի՝ **Արփի Արմանի Աբրահամյանի** ծննդյան կապակցությամբ /ծնված 2021 թվականի ապրիլի 30-ին, հիմք ծննդյան վկայական ԲԱ394364, տրված ՔԿԱԳ գործակալություն ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից՝ 2021 թվականի մայիսի 3-ին/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 19

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2021 թվականի **N59**-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՀՎԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N31-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակչուհի **Լուսինե Յուրիկի Սիմոնյանին** տրամադրել 200 000 ՀՀ դրամ դրամական օգնություն ամուսնու՝ **Արմեն Ռուբիկի Սիմոնյանի** զոհվելու համար /զոհվել է 22.10.2020թ., հիմք մահվան վկայական ԲԱ395392, տրված 05.05.2021թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 19
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2021 թվականի N60-Ա

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի մայիսի 19-ին <<Կարեն Մաչանյան>> /որակավորման վկայական 0244/ ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման հատակագծի և 2021 թվականի մայիսի 19-ին **Սուսաննա Դավիթի Դավթյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 4-րդ փողոցի թիվ 12 հասցեում գտնվող քաղաքացիներ **Դավիթ Գրիգորի Դավթյանին** և **Սուսաննա Դավիթի Դավթյանին** ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1102,0 քառակուսի մետր հողամասից /կադաստրային ծածկագիր 04-065-0017-0032/ առանձնացվող 540,0 քառակուսի մետր հողամասին՝ /Առանձնացվող հատված 2/ ըստ հողամասի բաժանման հատակագծի, տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան 4-րդ փողոց թիվ 12/1:

Նույն հողամասից առանձնացվող մյուս՝ 562,0 քառակուսի մետր հողամասին /Առանձնացվող հատված 1/ թողնել Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան 4-րդ փողոց թիվ 12 հասցեն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 19
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2021 թվականի N61-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականիմայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով՝ ըստ որի կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ ԱՁ <<Սեվան Մանվելի Թովմասյան>>-ի /որակավորման վկայական 0296/ կողմից 2021 թվականի մայիսի 7-ին տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Մխիթար Իշխանի Դավթյանի 2021 թվականի մայիսի 19-ի դիմումը, **որոշում եմ.**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Մխիթար Իշխանի Դավթյանի (ծնված 01.07.1964թ.) գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0,0367 հեկտար տնամերձ հողամասի և նրա վրա կառուցված 148,4 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շենք-շինությունների նկատմամբ (բնակելի տուն 92,2 քառակուսի մետր՝ կառուցված 1963 թվականին, բնակելի տուն 8,7 քառակուսի մետր՝ կառուցված 1990 թվականին, բաց պատշգամբ 7,2 քառակուսի մետր՝ կառուցված 1963 թվականին, աստիճան 1,8

քառակուսի մետր՝ կառուցված 1963 թվականին, անասնաշենք 22,0 քառակուսի մետր՝ կառուցված 1990 թվականին, թռչնանոց 16,1 քառակուսի մետր՝ կառուցված 2000 թվականին, պարիսպ 0,4 քառակուսի մետր՝ կառուցված 2000 թվականին):

2. Հողամասին և բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Սևանի փողոց N18:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 19

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2021 թվականի N62-Ա

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N42-Ն որոշումը, <<Արարատյան Խոհանոց>> ՍՊԸ տնօրեն Սեդրակ Մամուլյանի 2021 թվականի մայիսի 24-ի գրությունը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2021 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածով նախատեսված գումարից 60 000 ՀՀ դրամ տրամադրել <<Արարատյան Խոհանոց>> ՍՊԸ՝ Տոլմայի համահայկական 10-րդ փառատոնի կազմակերպմանը աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 24

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2021 թվականի N63-Ա

ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ ու 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286-Ն որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանում 2021 թվականի մայիսի 24-ին կայացած աճուրդային կարգով հողամասի վաճառքի արդյունքները, **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանում 2021 թվականի մայիսի 24-ին կայացած, Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0,0969 հեկտար այլ հողատեսքի հողամասի (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-065-0609-0015) աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Վահրամ Տելեմաքի Մարգարյանի հետ, օրենքով սահմանված կարգով, կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

4. Աշխատակազմի քարտուղարին՝ հիմք ընդունելով հողամասի առուվաճառքի պայմանագիրը համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխությունը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 24

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2021 թվականի N64-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Քաղաքացի **Վահե Համայակի Ավետիսյանին** տրամադրել 100 000 ՀՀ դրամ դրամական օգնություն մոր՝ **Հեղինե Մանվելի Ավետիսյանի** մահվան համար /մահացել է 11.05.2021թ., հիմք մահվան վկայական ԲԱ398790, տրված 12.05.2021թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՌԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի մայիսի 27

համայնք Մերձավան